



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2006թ.  
N 158

ք.Ստեփանակերտ

### Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել բնօգտագործման վճարի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ

ա) պինդ օգտակար հանածոների (բացառությամբ աղի) մարված պաշարների համար վճարը հաշվարկվում է սույն ենթակետում նշված (1) և (2) բանաձևերով՝ բացառությամբ սույն կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքի՝

$$ԲՎ = ՄՊ_{\sigma} \times (Գ_{\text{հ}} \times Դ_{\text{Տ}} / 100) \quad (1), \quad \text{երբ } (Գ_{\text{հ}} \times Դ_{\text{Տ}} / 100) > Դ_{\text{Հ}}$$

$$ԲՎ = ՄՊ_{\sigma} \times Դ_{\text{Հ}} \quad (2), \quad \text{երբ } (Գ_{\text{հ}} \times Դ_{\text{Տ}} / 100) \leq Դ_{\text{Հ}}$$

որտեղ՝

ԲՎ-ն - պինդ օգտակար հանածոյի մարված պաշարների վճարն է՝ հաշվետու ժամանակաշրջանի համար,

ՄՊ<sub>σ</sub>-ն - հաշվետու ժամանակաշրջանում պինդ օգտակար հանածոյի մարված պաշարների ծավալն է,

Գ<sub>հ</sub>-ն - հաշվետու ժամանակաշրջանում պինդ օգտակար հանածոյի իրացման փաստացի գինն է (առանց ավելացված արժեքի հարկի),

Դ<sub>Տ</sub>-ն - պինդ օգտակար հանածոյի մարված պաշարների համար վճարի դրույքաչափն է տոկոսով՝ համաձայն սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի «II. Պինդ օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար վճարի դրույքաչափերը» բաժնի 3, 4, 5, 6, 7, 8 և 9-րդ կետերի,

Դ<sub>Հ</sub>-ն - պինդ օգտակար հանածոյի մարված պաշարների համար վճարի դրույքաչափն է դրամով՝ համաձայն սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույքաչափերի «IV. Պինդ օգտակար հանածոների մարված պաշարների համար վճարի հաստատագրված դրույքաչափերը» բաժնի 1-ին, 2, 3, 4 և 5-րդ կետերի.

Սույն ենթակետում նշված (2) բանաձևով մարված պաշարների համար վճարի հաշվարկ կատարվում է նաև՝

- երբ հաշվետու ժամանակաշրջանում մարված պաշարների իրացում չի կատարվել,

- երբ իրացվել է ոչ թե օգտակար հանածոն, այլ դրա օգտագործման արդյունքում ստացված արտադրանքը կամ այն օգտագործվել է արդյունահանողի ներտնտեսական կարիքների համար,

- բնօգտագործման վճարի օբյեկտ համարվող ծավալների չափաքանակների որոշման նպատակով «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված բնօգտագործման փաստացի ծավալների և վճարողների կողմից հարկային և լիազոր մարմիններ ներկայացված՝ ստուգվող ժամանակահատվածում հաշվարկ-հաշվետվություններում արտացոլված ծավալների դրական տարբերության համար օրենքով սահմանված պատասխանատվության միջոցների հաշվարկման ժամանակ,

բ) ազնիվ, գունավոր, հազվագյուտ մետաղների և գունագեղ քարերի (բացառությամբ օնիքսանման մարմարի, վանակատի (օբսիդիանի) ու լիսովենիտի) համար վճարը հաշվարկվում է՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում մարված պաշարների ծավալից, դրույթաչափից և տվյալ մետաղի կամ քարի միջազգային շուկայական միջին գնից, հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաշվետու ժամանակաշրջանի համար հայտարարված գինը.

գ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանված կարգով իրականացվող մրցույթների արդյունքով շահագործման հանձնվող հանքավայրերի համար կարող են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանվել սույն որոշմամբ սահմանված դրույթաչափերից տարբերվող դրույթաչափեր.

դ) ստորերկրյա քաղցրահամ ջրերի ու աղի արդյունահանված պաշարների համար վճարը հաշվարկվում է՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված ջրի և աղի ծավալից ու սույն որոշմամբ հաստատված դրույթաչափերից:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործողների կողմից անմիջապես հորատանցքի (աղբյուրի) վրա հաշվիչ (չափիչ) սարքեր տեղադրված լինելու դեպքում՝ ստորերկրյա քաղցրահամ ջրերի արդյունահանված պաշարների համար վճարը հաշվարկվում է՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում հաշվիչ (չափիչ) սարքերով հաշվառված ջրի ծավալներից և հաստատված դրույթաչափերից.

ե) հանքային ջրերի արդյունահանված պաշարների համար վճարը հաշվարկվում է՝

1) միայն մեկ նպատակով հանքային ջրերի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործողների կողմից անմիջապես հորատանցքի (աղբյուրի) վրա տեղադրված գազանջատիչից (այսուհետ՝ գազանջատիչ) դուրս եկող ջրախողովակի (այսուհետ՝ առաջնային խողովակ) վրա ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր (այսուհետ՝ առաջնային ջրահաշվիչ) տեղադրված լինելու դեպքում՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում առաջնային ջրահաշվիչով հաշվառված ջրի ծավալից և սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույթաչափերի II բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետով տվյալ նպատակի համար նախատեսված դրույթաչափերից:

Առաջնային ջրահաշվիչ տեղադրված չլինելու դեպքում վճարը հաշվարկվում է՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում արդյունահանված ջրի ծավալից և սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույթաչափերի II բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետով տվյալ նպատակի համար նախատեսված դրույթաչափից:

Այն դեպքերում, երբ ջրօգտագործողի կողմից ածխաթու գազ ստանալու նպատակով գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղադրված (միացված) է (են) լինում ածխաթու գազ ստանալու սարք (սարքեր), լրացուցիչ հաշվարկվում է բնօգտագործման վճար՝ նաև ածխաթու գազ ստանալու համար՝ սույն որոշման 2-րդ կետի «գ» ենթակետով սահմանված կարգով.

2) միաժամանակ, մեկից ավելի նպատակներով հանքային ջրերի հորատանցքը (աղբյուրը) շահագործելիս՝ առաջնային խողովակին միացված հանքային ջրի

օգտագործման յուրաքանչյուր նպատակի համար առանձնացված խողովակների (այսուհետ՝ առանձնացված խողովակ) վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործողների կողմից ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքեր (այսուհետ՝ առանձնացված ջրահաշվիչ) տեղադրված լինելու դեպքում՝ որպես ըստ օգտագործման առանձին նպատակների հաշվարկված բնօգտագործման վճարների համագումար, որոնք հաշվարկվում են՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում համապատասխան առանձնացված ջրահաշվիչով հաշվառված ջրի ծավալից և սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույթաչափերի II բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված համապատասխան դրույթաչափից:

Այն դեպքերում, երբ ջրօգտագործողի կողմից գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տեղադրված (միացված) է (են) լինում ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր), լրացուցիչ հաշվարկվում է բնօգտագործման վճար՝ նաեւ ածխաթթու գազ ստանալու համար՝ սույն որոշման 2-րդ կետի «գ» ենթակետով սահմանված կարգով:

Առանձնացված ջրահաշվիչներ տեղադրված չլինելու դեպքում վճարը հաշվարկվում է՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում առաջնային հաշվիչ սարքով հաշվառված, իսկ դրա բացակայության դեպքում՝ հանքային ջրի հորատանցքից (աղբյուրից) փաստացի արդյունահանված ջրի ծավալից եւ սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույթաչափերի II բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետով սահմանված հանքային ջրի տվյալ հորատանցքի (աղբյուրի) մասով փաստացի օգտագործվող տեսակների գծով ամենաբարձր դրույթաչափից:

գ) ջրօգտագործողի կողմից գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ածխաթթու գազ ստանալու սարք (սարքեր) տեղադրված (միացված) լինելու դեպքում ածխաթթու գազ ստանալու նպատակով հանքային ջրերի արդյունահանված պաշարների համար վճարը հաշվարկվում է՝

1) գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա (մինչեւ ածխաթթու գազ ստանալու սարքն ընկած հատվածում) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գազաչափ տեղադրված լինելու դեպքում՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում գազաչափով հաշվառված ածխաթթու գազի ծավալից եւ սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույթաչափերի II բաժնի 10-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված դրույթաչափից,

2) գազանջատիչից դուրս եկող գազի խողովակի վրա (մինչեւ ածխաթթու գազ ստանալու սարքն ընկած հատվածում) գազաչափ տեղադրված չլինելու դեպքում՝ ելնելով հաշվետու ժամանակաշրջանում տվյալ հորատանցքից (աղբյուրից) փաստացի արդյունահանված ջրի ծավալից եւ սույն որոշմամբ հաստատված բնօգտագործման վճարի դրույթաչափերի II բաժնի 10-րդ կետի «բ» ենթակետով ածխաթթու գազ ստանալու նպատակի համար սահմանված դրույթաչափից:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը՝ բնական պաշարների արդյունավետ օգտագործման նպատակով երկամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն բնօգտագործման վճարի գանձման օբյեկտի տարր հանդիսացող փաստացի ծավալների նկատմամբ չափաքանակներ եւ սահմանափակումներ սահմանելու վերաբերյալ:

4. Լիազորել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը հրապարակելու ազնիվ, գունավոր, հազվագյուտ մետաղների եւ գունազեղ քարերի միջազգային շուկայական միջին գինը եռամսյակի վերջին ամսվա դրությամբ, մինչեւ եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 10-րդ օրը:

5. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 2-ի «Բնօգտագործման վճարի դրույթաչափերի մասին» թիվ 27 որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2006 թվականի ապրիլի 1-ից

**Դ Ր ՈՒ Յ Ք Ա Չ Ա Փ Ե Ր**  
**ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐԻ**

**I. Ջրօգտագործման համար վճարի դրույքաչափերը**

**1. Մակերևութային ջրերի (բացառությամբ լճերի և ջրամբարների) յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար`**

- ձկնաբուծության նպատակով 1 դրամ
- արդյունաբերական նպատակներով 0.5 դրամ
- խմելու և կենցաղային նպատակներով, 0.5 դրամ  
բացառությամբ 50 տոկոս եւ ավելի պետական (համայնքային)  
սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով  
ջրամատակարարման եւ ջրահեռացման  
գործունեություն իրականացնող  
ընկերությունների, որոնց համար` 0.025 դրամ
- ոռոգման նպատակով 0,0 դրամ:

**2. Լճերի և ջրամբարների ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար**

- ոռոգման նպատակով 0,2 դրամ
- այլ նպատակներով 1,5 դրամ:

**3. Խմելու համար պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար` 1.0 դրամ, բացառությամբ 50 տոկոս եւ ավելի պետական (համայնքային) սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով ջրամատակարարման եւ ջրահեռացման գործունեություն իրականացնող ընկերությունների, որոնց համար` 0.05 դրամ:**

**4. Խմելու համար ոչ պիտանի ստորերկրյա քաղցրահամ ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար`**

- ոռոգման նպատակով 0,0 դրամ
- այլ նպատակներով 1,0 դրամ:

5. Ռեկրեացիոն (հանգստի նպատակով լողավազաններում օգտագործելու) նպատակով ստորերկրյա թերմալ ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար՝ 50 դրամ:

**II. ՊԻՆԴ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՄԱՐՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՅԱՍ ՈՒ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԵՎ ԱՂԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

**1. Ազնիվ մետաղների մարված պաշարների յուրաքանչյուր գրամի համար՝**

ոսկի	1,5 տոկոս
արծաթ	1,5 տոկոս
պլատին	1,5 տոկոս

**2. Գունավոր և հազվագյուտ մետաղների մարված պաշարների յուրաքանչյուր տոննայի համար՝**

պղինձ	1,3 տոկոս
նոլիբդեն	1,3 տոկոս
կապար	1,0 տոկոս
ցինկ	1,0 տոկոս
ալյումին	1,3 տոկոս
ռենիում	1,3 տոկոս
կադմիում	1,3 տոկոս
սելեն	1,4 տոկոս
թելուր	1,3 տոկոս
քրոմ	1,0 տոկոս

**3. Վառելիքաէներգետիկ հումքի մարված պաշարների յուրաքանչյուր տոննայի համար՝**

ածուխ	5 տոկոս
տորֆ	3 տոկոս
այրվող թերթաքարեր	3 տոկոս

**4. Երեսապատման քարերի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝**

տուֆ	5 տոկոս
ֆելզիտային տուֆ (այդ թվում՝ դեկորատիվ)	6 տոկոս
գրանիտ (գրանոդիորիտ, գրանոսիենիտ)	7 տոկոս
մարմար, մարմարացված կրաքարեր	5 տոկոս

դեկորատիվ մարմար	6 տոկոս
կոնգլոմերատներ, կոնգլոբրեկչիաներ և	6 տոկոս
<b>5. սֆալերտին</b>	
բազալտ	4,5 տոկոս
հրալորբազալտ	6 տոկոս
<b>արարական քարերի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար`</b>	
տուֆ	4 տոկոս
տուֆաավազաքարեր	3,5 տոկոս
բազալտ	3,5 տոկոս
անդեզիտ, անդեզիտաբազալտ և այլն	3,5 տոկոս
պորֆիրիտ	3 տոկոս
կրաքար	3,5 տոկոս
<b>6. Լցանյութերի և բալաստային հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար`</b>	
հրաբխային խարամ	3 տոկոս
պեմզա	4 տոկոս
ավազախճաքարային խառնուրդ (ավազ, խիճ և այլն)	3 տոկոս
բալաստային հումք (պորֆիրիտ, բազալտ, անդեզիտաբազալտ, լիպարիտ և այլն)	3 տոկոս
<b>7. Շինանյութերի արտադրության հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար`</b>	
ցեմենտի հումք (կավեր, կրաքարեր)	6 տոկոս
կրաքար (կիր ստանալու համար)	3 տոկոս
կավեր	4 տոկոս
բնական հանքային ներկեր	4 տոկոս
գիպսատար կավեր	4 տոկոս
<b>8. Գունագեղ քարերի մարված պաշարների յուրաքանչյուր կիլոգրամի համար`</b>	
ազաթ	6 տոկոս
փիրուզ	6 տոկոս
վանակատ (ծիածանվող օբսիդիան)	6 տոկոս
հասպիս	6 տոկոս
օնիքսանման մարմար	5 տոկոս
լիստվենիտ	5 տոկոս
վանակատ (օբսիդիան)	7 տոկոս

**9. Մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հուճքի մարված պաշարների յուրաքանչյուր միավորի համար`**

ցեղիտ (խոր.մ)	5 տոկոս
պեռլիտ (խոր.մ)	6 տոկոս
դիատոմիտ (խոր.մ)	6 տոկոս
բենտոնիտ (տոննա)	6 տոկոս
դունիտ և պերիդոտիտ (տոննա)	4 տոկոս
հրակայուն կավեր (տոննա)	4 տոկոս
անդեզիտ, անդեզիտաբազալտ (թթվակայուն հուճք) (տոննա)	4 տոկոս
ծծումբ (տոննա)	3 տոկոս
կվարցիտ (ապակու հուճք, ֆլյուս) (տոննա)	3 տոկոս
դոլոմիտ (տոննա)	3,5 տոկոս
բարիտ (տոննա)	5 տոկոս

**10. Աղի եւ հանքային ջրերի արդյունահանված պաշարների համար`**

ա) աղի յուրաքանչյուր տոննայի արդյունահանման համար`

քարաղի տեսքով`	<b>440 դրամ</b>
աղաջրի տեսքով`	<b>45 դրամ</b>

բ) հանքային ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար` արդյունաբերական նպատակով`

3750 դրամ

բուժական նպատակով`

200 դրամ

ածխաթթու գազ ստանալու նպատակով`

150 դրամ

ռեկրեացիոն (հանգստի նպատակով լողա-վազաններում օգտագործելու) նպատակով`

50 դրամ

գ) արտադրված ածխաթթու գազի յուրաքանչյուր խորանարդ մետրի համար` 30 դրամ:

**III. ԿԵՆՍԱՊԱՇԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐԻ ԴՐՈՒ ՅՔԱՉԱՓԵՐԸ**

**1. Փայտանյութի (անտառանյութի) օգտագործման համար ծառի տեսակի յուրաքանչյուր խորանարդ մետրի օգտագործման համար`**

Անտառային ծառատեսակ-ները	Հեռավորու-թյունը (կմ)	Դրույքաչափը դրամով				
		Շինափայտ առանց կեղևի, ըստ ծառաբնի կտրվածքի (սմ)			տեխնոլոգիական փայտ (1 մետր երկարու-թյամբ` կեղևով)	Վառել ավիայտ (1 մետր երկար ությամբ` կեղևով)
		25-ից ավելի	13-25-ը ներառյալ	3-13-ը ներառյալ		
Կաղնի, հացենի, թխկի, թեղի	մինչև 10-ը ներառյալ	5700	5250	4380	2600	700
	10-25-ը ներառյալ	4390	4040	3370	2040	630
	25-40-ը ներառյալ	3990	3670	3070	1670	560

	40-ից ավելի	3420	3150	2630	1300	420
Սոճենի, լորենի	մինչև 10-ը ներառյալ	3300	3000	2540	1200	700
	10-25-ը ներառյալ	2540	2310	1950	1060	630
	25-40-ը ներառյալ	2310	2100	1780	930	560
	40-ից ավելի	1980	1800	1520	800	420
Հաճարենի	մինչև 10-ը ներառյալ	3000	2700	2310	1500	700
	10-25-ը ներառյալ	2310	2080	1780	1155	630
	25-40-ը ներառյալ	2100	1890	1620	1050	560
	40-ից ավելի	1800	1620	1390	900	420
Հունական ընկու- զենի, արջատխլի, սոսի, գիհի, կար- մրածառ (կենի) և պտղատու այլ ծառատեսակներ	մինչև 10-ը ներառյալ	13000	12000	10000	5900	1500
	10-25-ը ներառյալ	10000	9200	7600	4600	1400
	25-40-ը ներառյալ	9000	8200	6800	3600	1200
	40-ից ավելի	7700	7000	5800	2800	900
Բոխի և այլ ծառատեսակ-ներ	մինչև 10-ը ներառյալ	1250	1100	960	500	420
	10-25-ը ներառյալ	960	850	740	360	350
	25-40-ը ներառյալ	870	770	680	280	280
	40-ից ավելի	750	660	580	250	210

Սույն կետում կիրառվող՝ ստորև նշված հասկացություններն օգտագործվում են հետևյալ իմաստով՝

**ցցաչոր ծառ** բնական ծերացման, անտառածման պայմանների խիստ վատթարացման, տարերային աղետների (հրդեհ), հիվանդությունների, վնասատուներով խիստ վարակվածության և այլ պատճառներով չորացած կանգուն ծառ.

**փայտանյութի օգտագործում**՝ կանգուն ծառի և (կամ) ծառի առանձին ճյուղերի հատում, կոճղերի հանում և անտառից դուրսբերում, թափուկի հավաքում և անտառից դուրսբերում.

**հեռավորություն**՝ անտառի սկզբից (որտեղից անտառային ճանապարհով դուրս է բերվելու փայտանյութը) մինչև ծառահատման վայրն ընկած տարածություն:

## 2. Արդյունագործական նպատակով բույսերի օգտագործման համար՝

ա) **լայն կիրառում ունեցող դեղաբույսերի** (անթառամ՝ ծալքավոր, կատվախտ՝ դեղատու, զիվան՝ հսկայական, լերդախտ՝ ալեհեր, սրոհունդ (արևքուրիկ)՝ խոցված, լոշտակ՝ սպիտակ, լոշտակ՝ երկտուն, առյուծագի՝ սովորական, խնկածաղիկ՝ սովորական, տատրակ՝ սովորական (խոճկորիկ), օշինդր՝ դառը, կտտկենի՝ սև, արոսենի՝ սովորական, հազարատերևուկ՝ սովորական, եղերդակ՝ սովորական, եզան լեզու՝ մեծ, ուրց՝ Կոչիի, լորենի՝ սրտածև, կծոխուր՝ սովորական, ալոճ (սզնի) յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

վերգետնյա մասեր՝ 100 դրամ

արմատներ՝ 300 դրամ.

բ) **այլ դեղաբույսերի** յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

վերգետնյա մասեր՝ 50 դրամ



արմատներ՝ 200 դրամ.

զ) **լայն կիրառում ունեցող սննդային բույսերի** (շուշանբանջար՝ սոխուկավոր, սիբեխ՝ սովորական, սինդրիկ՝ հարթ, սինդրիկի բազմածաղիկ, շրեշ՝ փարթամ, ծնեբեկ՝ դեղատու, ծիսամիթ՝ մանրապտուղ (բոխի), ավելուկ՝ գանգուր) յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

վերգետնյա մասեր՝ 15 դրամ

արմատներ՝ 50 դրամ.

դ) **այլ սննդային բույսերի** յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

վերգետնյա մասեր՝ 10 դրամ

արմատներ՝ 30 դրամ.

ե) **տեխնիկական բույսերի** յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

վերգետնյա մասեր՝ 50 դրամ

արմատներ՝ 150 դրամ.

զ) **գեղազարդային բույսերի** յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝

վերգետնյա մասեր՝ 10 դրամ.

է) **բուսական խեժերի** յուրաքանչյուր կիլոգրամի համար՝ 500 դրամ:

**3. Արդյունագործական նպատակով օգտագործվող պտուղների, հատապտուղների և ընկուզավորների յուրաքանչյուր կիլոգրամի համար՝**

պտուղներ, հատապտուղներ՝ 30 դրամ

տխիլ (տկողիմ), ընկույզ՝ 60 դրամ:

**4. Կենդանիների տեսակների՝ գյուղատնտեսական, արդյունագործական և սոցիալական նպատակներով օգտագործման համար՝**

ա) կաթնասունների յուրաքանչյուր միավորի (հատ) համար՝

վայրի խոզ՝ 50000 դրամ

գորշուկ (փորսուղ)՝ 2500 դրամ

աղվես՝ 500 դրամ

քարակզաքիս՝ 2000 դրամ

ճահճակուղբ՝ 500 դրամ

մշկամուկ՝ 500 դրամ

նապաստակ՝ 800 դրամ

սկյուռ՝ 300 դրամ

քնամոլ՝ 200 դրամ

չղջիկ՝ 100 դրամ

խլուրդ՝ 20 դրամ

ոզնի՝ 200 դրամ

այծյամ՝ 85000 դրամ

եղեգնակատու՝ 50000 դրամ

լուսան՝ 50000 դրամ

ջրառնետ՝ 10 դրամ

<b>բ) թռչունների յուրաքանչյուր միավորի (հատ) օգտագործման համար՝</b>		
սև ցիմ`	10000	դրամ
ճահճային մկնաճուռակ`	10000	դրամ
լորաճուռակ`	5000	դրամ
ցախաքլորաորս`	50000	դրամ
գիշանգղ`	50000	դրամ
մեծ ճուռակ`	10000	դրամ
տափաստանային ճուռակ`	10000	դրամ
թավշոտ ճուռակ`	10000	դրամ
սովորական հողմավար բազե`	5000	դրամ
արտուտաբազե`	30000	դրամ
այլ բազեանմաններ`	5000	դրամ
սագանմաններ (սուլղո մրտիմն, կռնչան բադ, ճքճքան մրտիմն, կարմրագլուխ սուզաբադ, փումփուլավոր սուզաբադ)`	500	դրամ
կաքավ`	500	դրամ
փասիան`	2000	դրամ
թուրաջ`	2500	դրամ
լոր`	100	դրամ
սև փարփար`	300	դրամ
կռվակտցար, կարմրաոտ կտցար, մորակտցար`	100	դրամ
քարադրանմաններ`	200	դրամ
աղավնանմաններ (սովորական տատրակ, թխակապույտ աղավնի, անտառային աղավնի)`	100	դրամ
կկվանմաններ`	200	դրամ
բվանմաններ`	2000	դրամ
սովորական այծկիթ`	500	դրամ
սովորական կիվիվ`	500	դրամ
մանգաղաթևեր`	300	դրամ
ալկիոններ`	300	դրամ
հոպոպ`	100	դրամ
փայտփոր`	300	դրամ
ճնճղուկանմաններ (տնային ճնճղուկ, սովորական սարյակ, սև կեռնեխ, սինակեռնեխ, դաշտային արտույտ, տափաստանային արտույտ)`	100	դրամ
եղեգնահավ`	500	դրամ
ոսկեգույն մեղվակեր`	1500	դրամ.
<b>գ) սողունների յուրաքանչյուր միավորի (հատ) օգտագործման համար՝</b>		
գյուրզա`	3000	դրամ

այլ տեսակի օձեր`	1000	դրամ
մողես`	200	դրամ
կասպիական կրիա`	200	դրամ.

**դ) երկկենցաղների յուրաքանչյուր միավորի օգտագործման համար`**

գորտեր (լճագորտ, փոքրասիական գորտ) (կգ)`	70	դրամ
սովորական ծառագորտ (հատ)`	200	դրամ
փոքրասիական տրիտոն (հատ)`	500	դրամ
կանաչ դողդոջ (հատ)`	10	դրամ.

**ե) փափկամարմինների յուրաքանչյուր միավորի օգտագործման համար`**

անատամ (հատ)`	20	դրամ
խաղողի խխունջ (կգ)`	200	դրամ
այլ տեսակի փափկամարմիններ (կգ)`	100	դրամ.

**զ) հողվածոտանիների յուրաքանչյուր միավորի օգտագործման համար`**

գետի խեցգետին (կգ)`	50	դրամ
հաստապոչ կարիճ (հատ)`	20	դրամ
այլ տեսակի հողվածոտանիներ (հատ)`	10	դրամ.

**է) ձկների յուրաքանչյուր կիլոգրամի օգտագործման համար`**

սիգ`	50	դրամ
լոքո`	400	դրամ
սպիտակ ամուր, սև ամուր, հաշամ, հաստաճակատ`	500	դրամ
կարմրախայտ`	1000	դրամ
կարաս`	20	դրամ
ծածան`	100	դրամ
ցանկուն չնշված այլ ձկնատեսակներ`	30	դրամ

Օձի թույնի օգտագործման դեպքում բնօգտագործման վճարի դրույքաչափը թույնի յուրաքանչյուր գրամի համար հաշվարկվում է օձի համապատասխան տեսակի համար սույն կետի «զ» ենթակետում ներկայացված դրույքաչափի նկատմամբ կիրառելով 3.0 գործակիցը:

Ձկնկիթի օգտագործման դեպքում բնօգտագործման վճարի դրույքաչափը ձկնկիթի յուրաքանչյուր կիլոգրամի համար հաշվարկվում է սույն կետի «է» ենթակետում ներկայացված համապատասխան դրույքաչափերի նկատմամբ կիրառելով 10.0 գործակիցը:

5. Գյուղատնտեսական` խոտհնձի նպատակով անտառային ֆոնդի տարածքների յուրաքանչյուր հեկտարի միանվազ (միանգամյա) օգտագործման համար` 2000 դրամ:

6. Գյուղատնտեսական` արածեցման նպատակով անտառային ֆոնդի տարածքների օգտագործման համար` անասունների յուրաքանչյուր գլխի համար` յուրաքանչյուր օրվա կտրվածքով (խոշոր և մանր եղջերավոր անասուններ, խոզեր, ձիեր)`

բարելավված արոտավայրերում`	3 դրամ
բնական արոտավայրերում`	2 դրամ»:

**IV. ՊԻՆԴ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ՄԱՐԿԱԾ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՃԱՐԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

Սույն բաժնով սահմանված հաստատագրված դրույքաչափերը կիրառվում են պինդ օգտակար հանածոների համար օրենքով սահմանված մարված պաշարների ամբողջ ծավալների նկատմամբ:

1. Կառելիքաէներգետիկ հումքի մարված պաշարների յուրաքանչյուր տոննայի համար`

Օգտակար հանածոյի անվանումը	Դրույքաչափը (դրամ)
Ածուխ	400
Տորֆ	200
Այրվող թերթաքար	150

2. Երեսպատման քարերի, շինարարական քարերի, լցանյութի և բալաստային հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար`

Օգտակար հանածոյի անվանումը	Մարված պաշարից երեսպատման քարի, շինաքարի ելքը, %*)	Դրույքաչափը (դրամ)		
		երեսպատման քարը	շինաքարը	լցանյութը և բալաստային հումքը
Անդեզիտաբազալտ, անդեզիտ, բազալտ, հիալոբազալտ, դոլերիտային բազալտ, լիպարիտ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	250	100	30
	30-ից մինչև 40	300	130	
	40-ից մինչև 50	350	160	
	50-ից ավելի	400	200	
Գաբբրոներ, գրանիտներ, տուֆաավազաքարեր, մոնցոնիտներ, զրանոդիորիտներ, գրանոսիենիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	700	-	40
	30-ից մինչև 40	1000	-	
	40-ից մինչև 50	1300	-	
	50-ից ավելի	1500	-	
Կոնգլոմերատներ, կոնգլորեկչիաներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 20	800	-	-
	20-ից մինչև 30	1000	-	
	30-ից մինչև 40	1200	-	
	40-ից ավելի	1400	-	
Մարմարներ, մարմարացված կրաքարեր, դիաբազային պորֆիրիտներ, դիաբազներ, պորֆիրիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 20	600	-	300
	20-ից մինչև 30	800	-	
	30-ից մինչև 40	1000	-	
	40-ից ավելի	1200	-	
Տուֆեր, կրաքար և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	200	70	20
	30-ից մինչև 40	250	100	
	40-ից մինչև 50	300	130	
	50-ից ավելի	350	150	
Ֆելզիտային տուֆեր, տրավերտիններ, տուֆաբրեկչիաներ, չիդկվող տուֆաավազաքարեր և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	450	150	20
	30-ից մինչև 40	500	200	
	40-ից մինչև 50	550	250	
	50-ից ավելի	600	300	
Հրաբխային խարամ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	30
Պենդաներ, պեռլիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	35
Ավազակոպճային, ավազակոպճազլաքարային խառնուրդներ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	35

\*) Սույն կետում ելքի ցուցանիշը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված պաշարների համար սահմանված օգտակար (կամ փաստացի) ելքի չափն է:

**3. Շինանյութերի արտադրության հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար`**

Օգտակար հանածոյի անվանումը	Դրույքաչափը (դրամ)
Ցեմենտի հումք` կավեր, կրաքարեր, տրավերտիններ	80
Կրաքար` կիր ստանալու համար	25
Կավեր	20
Գիպսատար կավեր	200
Բնական հանքային ներկեր	1000

**4. Գունագեղ քարերի հումքի մարված պաշարների յուրաքանչյուր կիլոգրամի համար`**

Օգտակար հանածոյի անվանումը	Դրույքաչափը (դրամ)
Վանակատ (օբսիդիան)	5
Օնիքսանման մարմար, այդ թվում` - մենաքարը, երեսապատման քարը - լցանյութը, խճաքարը` որպես արհեստագործական քարերի հումք	30 5
Լիստվենիտ	500

**5. Մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի մարված պաշարների յուրաքանչյուր միավորի համար`**

Օգտակար հանածոյի անվանումը	Չափման միավորը	Դրույքաչափը (դրամ)
Անդեզիտ, անդեզիտաբազալտ (թթվակայուն)	տ	20
Բարիտ	տ	40
Բենտոնիտ	տ	550
Դիատոմիտ	խոր. մ	150
Դոլոմիտ	տ	40
Դունիտ և պերիդոտիտ	տ	100
Կվարցիտ (ապակու հումք, ֆլյուս)	տ	350
Հրակայուն կավեր	տ	50
Պեռլիտ	խոր. մ	450
Ցեոլիտ	խոր. մ	400
Հղկանյութեր	կգ	5

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար - նախարար**

**Ս. Գրիգորյան**